ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 5

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ (Գավառ քաղաք, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք գյուղ, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ (Գավառ քաղաք, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք գյուղ, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-2 համակցված տարածական պլանավորման նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին (աղյուսակները կցվում են):

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը Գավառ (Գավառ քաղաք, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք գյուղ, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան բնակավայրերը) համայնքի ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշմամբ:

3. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. Գավառ համայնքի (Գավառ քաղաք, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք գյուղ, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան բնակավայրերը) ղեկավարին և մարզպետին՝ ապահովել ՀՀ

կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «11» «դեկտեմբերի» 2023թ.